**հայ կուսակցութիւններուն** : Իսկ Գ.ն է «ԿԻԻԹԷՄՊԷՐԿ» ուր տպուած են **Բողբոջ** և **Հայկունի** թերթերը, նաև **Միւսրէպիսին վէճարը** (1910), **Հայաստանի ոգին** (1911) :

232-233. **ԱՅՆԹԱՊ** Սահմ. հռչակումէն առաջ ալ գոյութիւն ունէր ԿԵԴՐ. ԹՈՒՐՔԻՈՅ ԳՈԼԷՃԻ (Ամերիկացւոց) պզտիկ տպարանը որ վարժարանին տպագր. մանր մունր գործերովը կ'զբաղէր : Իսկ վերջերս այս քաղաքին մէջ ԱՒԵՏԻՍ ԽԱՆՁԷՏԵԱՆ ԵՒ ԸՆԿ. հիմնեցին «Թիճարէթ մաթպա'ասը»ն որ հրաւիրագիրի, նամակագլուխի, այցաքարտի ևն. գործերէ անդին չէ անցած : ☛ 1884ին «Կիլիկեան» գիշերօթիկ վարժարանի ուսանողք հոն հրատարակած են **Մենսոր** թերթը' (Վահան Քիւրքճեանի տնօրէնութեամբ և Միսաք Գօչունեանի աշխատակցութեամբ) որ տարուան մը կեանք ունեցաւ և որուն տպագրութիւնը կը կատարուէր Կ. Պոլիս, Գ. Պաղտատլեանի կողմէ :

## ԳԼՈՒԽ Գ.

| 1616ին սկսեալ | ԼԵՀԱՍՏԱՆ | մինչեւ 1912 |
|---|---|---|

### ԱՒՍՏՐԻԱ-ՀՈՒՆԳԱՐԻԱ

ԺԷ. դարուն սկիզբները, Հայոց հայրապետին թոյլ և շահախնդիր ընթացքով' Լեհաստանի հայ պատկառելի գաղութը տակաւ կորսնցուցած իր մայրենի լեզուն և ուր ուրեմն Ցիսուսեանց շահատակութեանց դաւանափոխ, հազիւ բախտն ունեցած է 1616ին Լեհաստանի մայրաքաղաքին' ԼԸՎՕՎի մէջ բացուիլը տեսնելու հայ տպարանի մը, նախաձեռնութեամբ

234. **Յովհ. Կրէց Քարմատանենց**ի որ զաւակն էր Բաղէշցի Մուրատի. իր մայրն էր Աննա, պապը' Տէր Սիմէոն քհնյ. : Տ. Յովհաննէս տարի մը ամբողջ աշխատած է գրաշարներու և այլ գործաւորներու հետ' հայ տառեր յօրինելու և յամրօրէն ածելու համար տպագրութիւնը 2 գիրքերու որոնք են **Սաղմոսարան**, 478 էջ, թուերը ձեռագիր դրուած և տպագրութիւնը 15 Դեկտ. 1616ին աւարտած : Այս գիրքէն Հ. Յովհ. Զօհրապեան Լեհաստան ճամբորդած ատեն օրինակ մը ձեռք ձգած է Սենեթին գիւղաքաղաքէն : Զարդափակ ճակատ մը ունի' վերը խաչելութիւն, ու վարը Հայր Աբրահամէ ոգեշնչեցին պատկերներով, մէջտեղը զարդագիր ՍԱՂՄՈՍ Ի ԴԱՒԻԹ. մէջերը զանազան խորանազարդեր, պատկեր' հանդերձ մեկնութեամբ Սաղմոսի, նաև Սաղմոսէ դուրս աղօթքներ : — Քարմատանեան նոյն տարին տպած է դարձեալ **Բժշկարան** մը : — Իր տպարանն «Ընդ հովանեաւ նշման Ս. Աձ.ածնի» կը գտնուէր Իլախաց երկրին մէջ (= Լեհաստան) Լէվ (= Իլվօվ կամ Լըվօվ) քաղաքը որ Բօլաքերէնն է Լէմպէրկ գերմ. յատուկ անուան : — Իրմէ վերջ Լեհաստանի մէջ Հայու տպարան երբեք գոյութիւն չէ ունեցած : 160 տարի ետք միայն պառակտեալ Մխիթարեանք կը հիմնեն իրենցը ԹՐԻԷՍԹԷ (Աւստրիա-Հունգարիա) զոր ապա կը փոխադրեն ՎԻԷՆՆԱ :

235. **Տպ. Մետրապոլտական** (ՍՈՒՉԱՎԱ)յէն 1649ին լոյս ընծայուած է **Աւետարան** մը, — ըստ Հ. Գաֆթանեանի ձեռագիր ցուցակին :

236. **ԵՂԻՍԱԲԵԹՊՕԼ** (Լեհաստան)ի մէջ 1876ին լոյս ընծայուած է **Տօնմարան մանկանց**, — ըստ Հ. Գաֆթանեանի ձեռագիր ցուցակին :